

սեպտեմբերի 2-ին Սինօզը նշանակել է նորան կրօնուսոյց և Հայոց լիզուի ուսուցիչ Երեւանի պրօզիմնադիայում: 1867 թ. 15 մարտի նոյն պաշտօնով նորան փոխադրել են ս. ԼՂմիածնի ժառանգաւորաց դպրոցը: 1868 թ. սեպտեմբերի 10-ին Պեարոս եպիսկոպոսը ըստ հրամանի վեհափառ կաթողիկոսի նորան վարդապետութեան մասնաւոր իշխանութիւն է տուելը: 1871 թ. մայիսի 8-ին կաթողիկոսական կոնդակով կարգուել է վերատեսուչ Երեւանի թեմի և Կարուց վիճակի Հայոց եկեղեցական ծխական դպրոցների: Այս պաշտօնը նա վարել է և 1876 թուականից մինչև 1880 թ. նոյեմբերի 24-ը: 1880 թ. նոյեմբերի 20-ին արձակուելով վերոյիշեալ պաշտօններից նշանակուել է ժամանակաւոր կառավարիչ Արցախու թեմի: 1882 թ. 29-ին զեկաների Սինօզը կարգել է նորան Բիշնևի ԼՂմիածնապատկան կալուածոց կառավարիչ: 1886 թ. 8-ն մայիսի Երջանկայիշատակ Մակար կաթողիկոսը եպիսկոպոս է ձեռնադրել նորան: 1887 թ. 3-ն յունիսի հաստատուել է Արցախու թեմի առաջնորդ: 1896 թ. 20-ն զեկաների նոյն պաշտօնով փոխադրուել է Շամախու թեմը:

Ի խրախոյս իւր մասուցած ծառայութիւնների համար հանգուցեալը 1877 թուին ստացել է վարդապետական լանջախաչ, 1878 թ. մետաքսեայ ծաղկէ փերն, 1883 թ. Աննայի երրորդ աստիճանի շքանշանը:

Մահուան գոյժը Մայր Աթոռ հասաւ յունուարի 7-ին և Սրբազան Տեղապահի կարգադրութեամբ հանգուցեալի անունը յիշուեցաւ նոյն օրը Մայր տաճարում՝ ս. պատարազից յետոյ կատարուող հոգեհանգստի միջոցին:

Յիշեցէ՛ Տէր և հանգուցէ՛ զհոգի ողբացեալ սպասաւորին ս. եկեղեցւոյ ի լոյս երեսաց իւրոց. ամէն:

ՊԱՐՍՎԱՀԱՅՔ:

ՀԱՄԱՌՕՏ ԵՎԱՐԱԳԻՐ

ՀԱՒԵՐՇԱՆ—ԱՐՏԱԶ ԳԱՒԱՌԻ Ս. ԹԱԳԵՌՈՍ ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆՔԻ:

Սուրբ Թաղէի վանքը գտնուում է Մակուայ

խանութեան մէջ, Ղարաքիլիսա Հայարնակ գիւղի հիւսիսային կողմում, միայն հարիւր քայլ հեռու նորանից, Կառուցուած է նա պատմական Սանատրուկ դաշտի արեւմտեան մասը կազմող լեռնամէջ տափարակի և ձորաբերան հարթութեան վերայ, Արեւելեան և հիւսիսային կողմով հստում է Սանդուխտան աղբերակը, Երջակայ գիւղերի հետ վանքը հաղորդակցութիւն է պահպանում սայլաղբւնաց ձանապարհներով, Ղարաքիլիսան՝ վանքի գիւղը, բաղկացած է երեսուն տնից, մեծ մասամբ դաղթած Տաճկահայաստանի զանազան կողմերից, Մուշի, Վանի և Ալաշկերտի՝ Հայուէնոր, Խառակոնիս, Հախորկ և Կործոտ գիւղերից, ոմանք էլ Մակուից են և Կարայնից (ս. Թաղէի վիճակից):

Բացի Ղարաքիլիսայ գիւղը, մնացեալ շրջակայ բոլոր գիւղերը թրքարնակ և քրդարնակ են, Ռուսպարսկական պատերազմից յետոյ աւելի քան երեսուն գիւղեր վանքի շրջակայքից և վիճակից գաղթել են Ռուսաց բաժինը, Ղարաքիլիսեցիք (վանքցիք) չունին սեփական գիւղական եկեղեցի, այլ վանքումն են կատարում իւրեանց բոլոր օրինակատարութիւնները, Գիւղի ծխական քահանան կանոնաւորապէս ժամ է ասում այստեղ, Մահմեդական շրջակայքում միակ վանքն է սա, որ վայելում է զանգահարութեան դարաւոր իրաւունքը, Երջակայ թուրքերը և քրդերը մեծ ակնածութեամբ են վերաբերուում դէպի սուրբ Թաղէի վանքը, իրրև մի մեծ ուխտատեղի (Ղարաքիլիսայ օջաղի):

Երջակայ ժողովրդեան մէջ ես ոչ մի աւանդութիւն չգտայ վանքի գոյութեան և շինութեան վերաբերեալ, Այլ և նախի մատենագրութեան մէջ ս. Թաղէի վանքի հիմնարկութեան մասին ոչ մի յիշատակութիւն չյաջողուեցաւ գտնել:

Ս. Թաղէի իրրև Հայոց աշխարհի առաջին Լուսաւորչի, նորա Ուռհայից Շաւարշան—Արտաղ գալու և Սանգուխտ կոյսի դարձի նորա քարոզութեան և նահատակութեան և նորա նշխարների գիւտի մասին եղած աւանդութիւնները զանազան ժամանակներում են խմբագրուել և նորանոր ձևակերպութիւններ ստացել, այնպէս որ նոցանից ևս որոշ եղակացութիւն վանքի շինութեան համար չենք կարող հանել, Սակայն առհասարակ Հայոց վանքերի և ուխտատեղիների պատմութիւնից գիտենք, որ ամեն մի նոր վկայարան, մատուռ, ուխտատեղի և վանք կառուցանելու մեծաւ մասամբ սկզբնապատճառ եղել է սրբոց մասունքների կամ նշխարների գիւտը, ուստի մենք ևս կարող էինք ս. Թաղէի վանքի նախնական հիմնարկութիւնը կապել նորա նշխարների գիւտի հետ, քանի որ հակառակ պատմական ոչ մի ապացոյց չունինք:

Ս. Թաղէի նշխարների գիւտի համար կրկին պատմութիւններ կան, Առաջին պատմութեան համաձայն այդ գիւտը տեղի ունեցած է համարուում է հինգե-

բորդ դարի վերջին քառորդին: Յովհան Մանգակունի կաթուղիկոսի և Ասհան Մամիկոնեան մարդպանի օրով (485—486)* իսկ երկրորդ պատմութեան համաձայն ութերորդ դարի առաջին քառորդում Յովհան Օննեցի կաթուղիկոսի ժամանակ ** (721 723):

Սորանից դուրս մեզ ոչինչ յայտնի չէ ս. Թագէի հռչակաւոր վանքի անցեալի մասին մինչև ժ. Գ. դարը: Միայն ժ. Գ. դարից այս կողմ ունինք ձեռքի տակ և՛ մատենագրական տեղեկութիւնք: և՛ յիշատակարանք, արձանագրութիւնք, կալուածագիրք, կոնդակք, և զանազան այլ թղթեան: *** որոնցից կարելի կլինի արդէն մակարերել, թէ այս վերջին վեց դարու ընթացքում ինչ անցքեր են տեղի ունեցել այս վանքի շուրջը և նպատակ նորա ծագման և բարգաւաճման:

Ս. Թագէի վանքը բաղկացած է այժմ կրկնակի տաճարներից: որոնց չորս կողմը միաբանների կացարաններ են և այլ կարևոր շէնքեր՝ շրջապատուած բուրգաւոր պարիսպներով: Տաճարի հին բաժինը 1329 թուականին է շինած: Չաքարիա արհի եպիսկոպոսի ձեռնտուութեամբ, կապտագոյն սրբատաշ քարից: աւազխառն կրաշաղխով և խաշաձե յատակագծով: Սոյն շինութեան քարը բերուած է երկու ժամ հեռաւորութեան վերայ Գարաբուլաղ անուամբ: Գարայնի գիւղի մօտ գտնուող, քարահանքից: Խաշաձե կաթուղիկէի մեծութիւնն է միջին տրամագծերով 4 1/4 սաժ. × 4 1/4 սաժ. նա ունի մի խորան: երկու սեղան: հինգ լուսամուտ: իսկ գմբէթը չորս լուսամուտ: Հարաւային խորանի վերևի մասում գաղտնի պահեստի տեղ կայ: Անսիւն է այս տաճարը և հաստատուած կամարների վերայ: Սեղանի վերայ բարձրանում է քարաշէն: քանդակազարդ: գմբէթազարդ խաչկալը: գոներով ու կամարներով: Սեղանի առաջի մասը զարդարած է գեղանի խորաքանդակ նկարներով և արձանագրութեամբ: Հարաւային խորանում ամփոփած կան երկու վարդապետաց մարմիններ՝ Չաքարիա և Եսայի անուաններով + 1643 և + 1751 թուեր կրող մարմար շիրիմների տակ: Խորանների դռները զարդարած են սագափի զարդարանքներով: Ներսի հիւսիսային որմի վերայ քանդակած է շինութեան հանգամանքները պատմող խոշորագիր

արձանագրութիւնք: եկեղեցւոյ շինուածքը շարժից բաւականին վնասուել է: խաչի ձևով ճաքճաքել: նա մի քանի անգամ զանազան ժամանակներում: զանազան մարդկանց ձեռքնաբերութեամբ նորոգուած է: Աթուղիկէիս դրսի մեծութիւնն է 5 ս. × 5 ս. × 5 ս. երկարութիւն: լայնութիւն և բարձրութիւն: Գրսի պատուհանների շրջանակը գոյնզգոյն քարերով զարդարած է: Եկեղեցւոյ տանիքը սալալայտակած է: որ տեղ տեղ խանդարուել է և բուսականութեամբ ծածկուել: Նոյն վիճակի մէջ են նաև պատերը:

Այս հին շէնքին կից կանգնած է նոր փարթամաշէն: զարդարուն և գեղեցկաքանդակ Տաճարը: որի հիմնարկութիւնն եղել է զարուս սկզբներում՝ երջանակայիշատակ Բղնունի Սիմեօն արքեպիսկոպոսի հոգածութեամբ: նոր Տաճարը միանգամայն նման է ձևով և կերտուածքով ս. Էջմիածնի Տաճարին: այդպէս և մեծութեամբ: Միայն ս. Թագէի Տաճարը կիսաւարտ է: անշուք և մերկ ներսից: մինչ զրսից միանգամայն հրաշալի է: Ամբողջ Տաճարը գօտխաձե ժապաւէնանման քանդակներով զարդարած է: ինչպէս օր. Մայր Աթոռի զանգակատունը: Հինութիւնն ամբողջովին սպիտակ: պանրագոյն: քարից է: որ բերուած է մի ժամ հեռաւորութեան վերայ գտնուող Գրխուլաղ (Հաւարշան) գիւղի մօտից: Տաճարն ունի տան և մէկ լուսամուտ: երկք դուռը և երկու սեղան: հիւսիս հարաւ: գմբէթը ութ լուսամուտ: նա բարձրանում է չորս հսկայական սիւների վերայ: Մեծութիւնն է միջին տրամագծերով 8 × 8 ս.: Պատերի բարձրութիւնն է 5 սաժէն: Չանգակատունը կիսակործան է և կիսատ: Տաճարի կտրան սալալայտակը թերակատար է և բուսականութեամբ ծածկուած: ուստի միշտ կաթում է անձրևներից և ձիւնից յետոյ: Այս տաճարն ևս երկրաշարժից խախտուած է: միայն թեթև կերպով: Արևմտեան դռան ճակատը զարդարած է հիանալի քանդակներով: Գառն գլխին ամբացրած է մի մարմնուեայ պարսկերէն արձանագրութիւն՝ նուիրուած Պարսից Աբրաս Միրզայի յիշատակին: Հարաւային: արևմտեան և հիւսիսային պատերը զարդարած են զանազան կենդանիների և բոյսերի նկարաքանդակներով և բազմաթիւ արձանագրութիւններով: Արձանագրութիւններ կան նոյնպէս Տաճարի ներքը սիւների ճակատներին: Հին կաթուղիկէն նորի համար ծառայում է իրրև սեղան և երգիչների տեղ: Հնի արևմտեան պատը վերցրած է և նոր տաճարը կցած հնի հետ:

Վանքի արևմտեան կողմում: պարսպից դուրս սաանձին շրջապատի մէջ է գտնուում անտեսական պիտոյքների բակը: ձիթհանքը: գոմանոցը և շին: Շրջապատի բոլոր շինութիւնները կառուցած են կաւաքարից: հասարակ շաղխով: Խցերի մեծ մասը թաղակապ է: Արևելեան բուրգերն եռայարկ

* Ապիտոբ է: 1853. Վեհ. երես 58. 96—97. Չալխան Ա. երես 584—85—86. Ասոյիկ. Պեսեր. 58 p. երես. 81—82.

** Յայսմարտի. Պոյխ 1732. երես 592—594. Յուցակի Վեհնայի ձեռագրաց. 95 p. երես 87 (p. 10: Յայսմարտի) կել:

*** Մեր մեկ քերած պատմական հարուս նիւթերը: յուսով ևնի: որ միջոց կուեկեակի հրատարակելու ննջնեկ Արարտի մէջ: իրեւ նում նիւթ ս. Թայիի վանքի պատմութեան համար:

են և կամարակայ Երջպարիսպը նմանապէս շինած է հասարակ շաղախով և քարով:

Վանքի շինուածքին և շրջակայ բնակարանքին նայողը անշուշտ կգայ այն համոզման, որ այս ամբողջ ժամանակով մեծ հարստութիւն է ունեցել՝ լայնածաւալ, ընդարձակ կալուածներ, Երբք այսպէս էլ եղել է: մինչև վերջին Ռուս պարսկական պատերազմը՝ իսկ այնուհետև վանքը օրստօրէ անշքացել և հասել է ներկայ խղճալի դրութեանը: Պարսկահայ գաղթականութիւնից յետոյ վանքը զրկուելով ժողովրդից՝ զրկուել է և կալուածներից ու եկամուտից: Վանքապատկան գիւղերի ամայանալուց յետոյ երկրի խաները ընակեցրել են նոցա թուրքերով և քրդերով: Այս տեսնելով վանքի մէջ նստող առաջնորդները իւրեանց ամբողջ յիսունական թուականներին փոխադրել են Քափրէզ քաղաքը, որով և վանքին վերջին հարուածն է հասել:

Այդ օրից ի վեր վանքում նստում են հասարակ վանահայրեր, որոնք չկարողանալով նոյն իսկ եղած կալուածները ձեռքում պահել՝ վերջին ժամանակներս նոցանից ևս զրկուում են: Ս. Քաղէի վանքի լայնատարած կալուածներից ներկայումս վանքի ձեռքին մնացել են միայն մի քանի վարելահողեր որպիսիք են՝ Խամեր, Քշաքշէն, Գեօղի ականջ, Քարխանքի գէմ, երկու Կառնուտ, Կալըանոց, Էրեշտակապետ, Սեահոզ, Կալըբում և Զարէկ, ընդամենը 25—30 խալվար սերման տեղ: Ինչպէս լսում ենք, վերջերս վարելահողերի վերջին երեք մասերը ևս անցել են խանի ձեռքը:

Այսքանը վանքի անշարժ հարստութեան մասին: իսկ շարժական հարստութիւններն են՝ մի քանի հասարակ տնտեսական պարագաներ, մի ձեռք դութանի գոմէշ և եզն, մի քանի կով, հորթ և մի աւանակ:

Եկեղեցական հարստութիւնը կազմում են մի քանի մասուէք օրրոց, մի քանի գրչագիր կիսափութ մատեններ, եկեղեցական անօթներ և զգեստներ, որոց մանրամասն գուցակը յառաջիկայում կհրատարակենք վանքի պատմական նիւթերի հետ:

Խ. Վ.

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Բ:

ՎԵՂՈՒՆԵՔ Ի ԿՈՆՍՏԱՆՍՆՈՒՅՆ ՎԵՏԱՓՈՒ ՀԱՅՐԵՊԵՏՈՒ:

Կոնստանտնուպոլիսի Ս. Սիմօղի, որով կարգի գործակալ Նոր Բայազիդ քաղաքի Մատթեոս վարդապետն Մատթեոսեան. թ. 1285:

— Կոնստանտնուպոլիսի Ս. Սիմօղի, որով կարգի լազարեան Պազով քաղաքի Ռոմանիոյ, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական. թ. 1323:

— Յանուէն Խորէն աւագ քահանայի Փէշիվանեան Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ Ղալաթիոյ Կ. Պոլսոյ, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան Ամեն. Պատրիարքի Կ. Պոլսոյ թ. 1324:

— Յանուէն Ս. Սիմօղի, որով փոխադրին քանի մի վանահայր և գործակալք ի տեղ ոջէ, յայլ տեղի թ. 1347:

— Յանուէն Հոգաբարձութեան և Տեսչի թեմ. դպրանոցին Շուշուոյ, որով պատու իրի կարգադրել առաքել յամենայն եկեղեցիս քաղաքին զերկեցիկ խումբս յաշակերտաց դպրանոցին. թ. 1376:

— Յանուէն Ս. Սիմօղի՝ սակս նախահաշուոյ վանուց Ս. Էջմիածնի որ վասն 1898 ամի. թ. 1422:

— Յանուէն Ս. Սիմօղի՝ որով յայանի զճանապարհորդութեանէ Նորին Սրբութեան ի Տրփիս և պատու իրի առնել զպատշաճաւոր կարգադրութիւն. թ. 1471:

— Յանուէն Տ. Դարեգին Արեգայի, որով կարգի Մատենադարանապետ Մատենադարանին Մայր Աթոռոյ թ. 1477:

— Յանուէն Ս. Սիմօղի, որով պատու իրի յատկացանել ի վանքապատկան հողոյ չորս գետեախին հող, վասն շինութեան այդգործական դպրոցի մերձ Աշտարակ դեղջ. թ. 1478:

— Յանուէն Գեր. Տ. Սարգիս Եպիսկոպոսի նախանդամոյ Ս. Սիմօղի, որով շնորհի նմա պատիւ Արքութեան. թ. 1479:

— Յանուէն Տ. Կորիւն վարդապետի քարտուղարի Ն. Սրբութեան, որով շնորհի նմա լանջախաչ վարդապետական ականակուռ. թ. 1480:

— Կոնստանտնուպոլիսի Ս. Սիմօղի, որով յայտ-